

ԻՆՉՊԵՍ ՀԱՇՎԱՌՎԵԼ ՈՐՊԵՍ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ

ՔԱՅԼ 1

Պետական գրանցում ստանալուց հետո,
համապատասխան փաստաթղթերով այցելեք
հարկային տեսչություն և դիմեք Հարկ
վճարողների սպասարկման բաժին:

Դուք կարող եք նաև, որպես ֆիզիկական
անձ, կամավոր կանգնել հարկային
հաշվառման և ստանալ հարկ վճարողի
հաշվառման համար (ՀՎՀՀ), նույնիսկ այն
դեպքում, եթե անհատ ձեռնարկատեր չեք
հանդիսանում: Այդ դեպքում պետական
գրանցման անհրաժեշտություն չկա:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Եթե պետական գրանցում ստանալուց հետո ուշացնեք հարկային մարմնում հաշվառվելը՝ այսինքն հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ստանալու համար դիմելը, ավելի քան մեկ ամիս, ապա **կենթարկվեք վարչական տուգանքի՝** նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև քսանապատիկի չափով (տե՛ս ՀՀ վարչական օրենսգիրք, հոդված 170.4.): Այստեղ “մեկ ամիս” նշանակում է տվյալ ամսաթվից մինչև հաջորդ ամսվա միևնույն ամսաթիվը:

Առանց հարկային մարմնում հաշվառվելու ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը համարվում է **ապօրինի գործունեություն** և պատժվում օրենքի ողջ խստությամբ (տե՛ս “Հարկերի մասին” ՀՀ օրենք, հոդված 26):

ԻՆՉ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՐՊԵՍ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՇՎԱՌՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

- պետական գրանցման վկայականի ՁՅ՝ Ճ»Մ
- տնօրենի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմում

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՐ

- պետական գրանցման վկայականի պատճեն
- անձնագրի և սոցիալական քարտի (առկայության դեպքում) պատճեններ
- անհատ ձեռնարկատիրոջ կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմում

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՉԱՆՑ ՀԱՄԱՐ

- անձնագրի և սոցիալական քարտի (առկայության դեպքում) պատճեններ
- ֆիզիկական անձի կողմից լրացված՝ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմում

Նոտարների, ինչպես նաև դիվանագիտական ան
ներկայացուցչությունների և հյուպատոսական
հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային,
միջկառավարական (միջպետական)
կազմակերպությունների համար սահմանվում է
հարկային հաշվառման կանգնելու հատուկ կարգ:

ՈՐՏԵՂԻՑ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՀՎՀՀ-Ի ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ

Դիմումի ձևը կարելի է ստանալ հարկային տեսչության
Հարկ վճարողների սպասարկման բաժնից կամ բեռնել
Հարկային պետական ծառայության պաշտոնական
ինտերնետային կայքից՝ www.taxservice.am :

ՔԱՅԼ 2

Լրացրեք ՀՎՀՀ-ի տրամադրման դիմումի ձևը և նախատեսված մյուս փաստաթղթերի հետ միասին հանձնեք Հարկ վճարողների սպասարկման բաժնի աշխատակցին:

Հարկ վճարողների սպասարկման բաժնի աշխատակիցը կստուգի փաստաթղթերի լրացման ճշգրտությունը և անբողջականությունը և կգրանցի Ձեր դիմումը: Աշխատակիցը Ձեզ կտեղեկացնի հաջորդ այցելության` ՀՎՀՀ ստանալու օրվա մասին, որը պիտի լինի ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը:

Հարցեր ունենալու դեպքում դիմեք Հարկ վճարողների սպասարկման բաժնի:

ՔԱՅԼ 3

Նշանակված օրը ներկայացեք Հարկ վճարողների սպասարկման բաժին և ստացեք հարկային տեսչության կողմից կնքված հարկ վճարողի հաշվառման վկայականը, որի վրա նշված է հարկ վճարողի անվանումը (եթե անհատ ձեռնարկատեր եք՝ Ձեր անունը և ազգանունը) և ՀՎՀՀ-ն:

*Ստանալիս չմոռանաք ստորագրել
գրանցման մատյանում:*

Անհրաժեշտ է հիշել,

որ ՀՎՀՀ-ի տրամադրման դիմումում նշվող տվյալների փոփոխության դեպքում պարտավոր եք այդ մասին գրավոր տեղյակ պահել Ձեզ սպասարկող հարկային տեսչություն՝ փոփոխություններից հետո հարկային հաշվարկների, հաշվետվությունների առաջին իսկ ներկայացման հետ միաժամանակ:
Որպես հարկ վճարող հաշվառվելու գործընթացն այսքանով ավարտվում է:

ԿԱՐԵՎՈՐ Է ԳԻՏԵՆԱԼ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար բանկային հաշիվներ բացվում են միայն ՀՎՀՀ-ի առկայության դեպքում:

Հարկ վճարողի հաշվառման համարի առկայությունը պարտադիր է հարկ վճարողի կնիքի, ինչպես նաև օրենսդրության համաձայն վճարահաշվարկային փաստաթղթեր համարվող փաստաթղթերի վրա:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՎՀՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հարկ վճարողի հաշվառման համարը միակն է և
ենթակա չէ փոփոխման:

Հարկ վճարողի հաշվառման համարը չի
կարող տրամադրվել այլ հարկ վճարողների:
Ֆիզիկական անձին տրամադրված ՀՎՀՀ-ն
միշտ մնում է անփոփոխ՝ թե՛ անհատ
ձեռնարկատեր հանդիսանալու, թե՛
չհանդիսանալու ժամանակ:

Կազմակերպության վերակազմավորման
դեպքում հարկ վճարողի հաշվառման
համարը փոխանցվում է նրա
իրավահաջորդին:

ԵՐԲ և ԻՆՉՈՒԻ ԿԱՐՈՂ Է ԿԱՍԵՑՎԵԼ ՀՎՀՀ-Ի ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԻՄՈՒՄԸ

Չեր դիմումը և փաստաթղթերն ընդունելուց հետո հարկային տեսչությունում ստուգվում է Չեր ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունն օրենքների պահանջներին:

Նմուշային ձևեր ներկայացնելու դեպքում ստուգվում է միայն լրացված տեղեկությունների լիարժեքությունը և ճշտությունը: Դրա արդյունքում հնարավոր է, որ հաշվառվելու Չեր դիմումը կասեցվի, եթե առկա է հետևյալ հիմքերից որևէ մեկը.

1. ներկայացված փաստաթղթերն ամբողջական չեն, լրացված են թերի կամ խախտումներով, չեն համապատասխանում փաստաթղթերի ցանկին

2. տեղեկություններում առկա են անճշտություններ, կամ կեղծ տվյալներ կազմակերպության կամ ֆիզիկական անձի վերաբերյալ

Ռիմուսի կասեցման դեպքում հարկային տեսչությունը պարտավոր է կասեցման և կասեցման հիմքերի մասին Ձեզ գրավոր տեղեկացնել դիմումը ստանալուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրը:

Տեղեկացնելուց հետո ՀՎՀՀ-ի տրամադրման ժամկետի ընթացքը կասեցվում է մինչև դիմումի կասեցման հիմքերի վերացումը:

ԻՆՉՊԵՍ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԱՆՀԻՄՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ

Եթե ՀՎՀՀ-ի տրամադրման համար Ձեր դիմումն անհիմն է կասեցվել, ապա հարկային տեսչության աշխատակցի գործողությունները կարող եք բողոքարկել հարկային տեսչության նրա անմիջական վերադասին: (շարունակելի)

Բողոքները հարկային տեսչության կողմից քննության են առնվում և դրանց մասին որոշումներ են ընդունվում ոչ ուշ, քան բողոքը ստացվելու օրվանից հետո՝ 3 օրվա ընթացքում:

Ընդունված որոշումները կարող են բողոքարկվել վերադաս հարկային մարմին, մասնավորապես ՀՀ հարկային պետական ծառայության գանգատարկման հանձնաժողով, բողոքարկողի կողմից որոշման կրկնօրինակն ստանալու օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում, կամ անմիջապես դատարան:

ՀԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐ

Տեղեկանալ համապատասխան հարկային
օրենսդրությանը

Տեղեկանալ համապատասխան
հաշվետվությունների

Տեղեկանալ վճարման ժամկետների

**ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՁԵՉ ՕԳՏԱԿԱՐ ՈՒ
ՀԱՋՈՂԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**